

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Բ Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԴ. ՊՐԱԿ Գ.

1886

ՅՈՒԼ. ԱՒԳՈՍՏ. ՍԵՊՏ.

Ա.ՋԴ.

Ներկայ տարւոյս (1886) Բազմաշէշ Հանդիսարանի բաժանորդաց 'ի վայելս սահմանուած գրեանք, ըստ բազդի վիճակահանութեան, որ տեղի ունեցաւ 'ի 5 սեպտեմբերի, հետեւեալ ցուցակին համեմատ պիտի բաշխուին առ իւրաքանչիւր Տեարս :

Աշխարհագրութիւն քաղաքական, ընդարձակ, պատկերազարդ. վիճակեցաւ Պր. Կարապետ Հազարեանի, 'ի Կ. Պօլիս :

Ռոստլի Հաւքերդունի. գիւցազներգութիւն. վիճակեցաւ առ Գերպ. Ստեփանոս եպիսկոպոս Մխիթարեան, 'ի Դաւրէժ :

Վարք Յուլիոս Կեսարու. մատենագրութիւն Նարոէոն Գ. Կայսեր. վիճակեցաւ առ վարժապետ Էմիլիոյ Դէզա, 'ի Բիզա :

Աղբար Թովմասի տնակը. 2 հատոր. վիպասանութիւն Պիլըր Սէօու Տիկնոյ. վիճակեցաւ Պր. Պետրոս Նուրիխանի, 'ի Տրապիզոն :

Խօսեցեալք. 2 հատոր. վիպասանութիւն Աղ. Մանծոնեայ. վիճակեցաւ առ Պարոն Ղուկաս Բաղրուպանի, 'ի Պուտաիէշտ :

Հոմերի Խիական. 2 հատոր. Թարգմանութիւն Հ. Եղիա Թովմանանի. վիճակեցաւ առ Թարութիւն վարդապետ Պաթմանեան, 'ի Կ. Պօլիս :

Մատենագիտութիւն Ոսկական. տպագրութեան սկիզբէն մինչև ցայսօր մեր ազգին մէջ լոյս տեսած ամենայն գրոց ցանկ, ընդարձակ և հմտալից տեղեկութեամբք. վիճակեցաւ առ Պր. Թարութիւն Տէր Եսայեան, 'ի Ս. Էմիւածին :

Պատմութիւն ժամանակակից, 1815-1848, գործ Հ. Մինաս վ. Նուրիխան. վիճակեցաւ առ Պր. Բարութիւն Կաղենեան, յ'Արդուն (Սատլէշ):

Առձեռն բարոյական եւ քաղաքական սնտեսութիւն. ընտիր գործ Ռարէի Գաղղիացոյ, վարձատրեալ յ'Ալկաղեմիայէն Գաղղիոյ. վիճակեցաւ առ Աշակերտա Մուրատ-Ռափայեղեան վարժարանի, 'ի վենետիկ:

Բանալի ընտեան երեւութից, ամենապարզ և դիւրին ոճով աւանդեալ կարեոր ծանօթութիւնք ընութեան գաղտնեաց վրայ. վիճակեցաւ առ Պր. Գէորգ Գարակէօղեան, 'ի Տրապիզոն:

Արա Գեղեցիկ, վիպասանութիւն անուանի՝ Պարրիւեայ Իտալացոյ՝ Շամիրամայ և մեր Արա նահապետին պատմական աւանդութեան վրայ. վիճակեցաւ առ Պր. Կարապետ Մութաֆեան, 'ի Տփլիս:

Պատմութիւն Ս. Գրոց, ընդարձակ (Ջօհրապեան), վիճակեցաւ առ Պր. Բարութիւն Հէքիմեան, 'ի Սամոն:

Վիտայի Քրիստոսական. վիճակեցաւ առ Պր. Յովհաննէս Կապալեան, 'ի Տփլիս: Հատընտիր քերդուածք յ'Աստուածային կատակերգութենէն Տանդէի, վիճակեցաւ առ Սարգիս վարդապետ Տէր Գասպարեան, 'ի Ս. Էջմիածին:

Ֆելիշ Ռոպովին վերջին վայրկեանները, ստուգապատում վիպասանական դէպք. վիճակեցաւ առ Պր. Երուանդ Խորասանճեան, 'ի Տրապիզոն:

